ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՑԻՆԻԶՄՆ ԻԲՐԵՎ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱԿԱՀԱՄԱԿԱՐԳ

ԼԵՎՈՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Մարդն իր անհատական կենսական ուղու ընթացքում հաճախ է բախվում գոյության դատարկության, անիմաստության և աբսուրդի հետ: Ծնվելու օրվանից իսկ սկսած՝ մարդը լսում է իր կյանքն իմաստավորող և մեկնաբանող զանազան պատմություններ կամ տեքստեր, որոնք ոչ միայն իմաստ և նշանակություն են տալիս նրա գոյությանը, այլև ինչ-որ տեղ նաև արժևորում են այն, աշխարհը հասկանալի են դարձնում նրա համար: Եվ իսկապես, «աշխարհը մարդու համար կա հասկացվածության չափով, այսինքն՝ հասկացված իմաստների տեքստ է»[1]: Իր կենսական ուղին մարդն ուրվագծում է այդ «հասկացված իմաստների տեքստերի» բովանդակությանը համապատասխան ապրելու սկզբունքով: Սակայն իր անձնային զարգացման ընթացքում մարդը երբեմն հայտնվում է այնպիսի իրավիճակներում, երբ նրան պատմված պատմություն-տեքստերը նրա իսկ կողմից մերկացվում են որպես խաբկանքներ, պատրանքներ, մոլորություններ: Նման իրավիճակները կարելի է դիտարկել որպես կենսականության վթարներ, քանի որ մարդու ակնկալիքները, գիտելիքները, մեկնաբանությունները, որոնք նա ստացել է իր կենսափորձի ընթացքում լսած պատմությունների հիման վրա, այլևս չեն բավականացնում իրականությունը հասկանալու և բացատրելու, առավել ևս՝ արժևորելու համար: Այս պարագայում մարդը երբեմն որդեգրում է ամեն արժեք և իմաստ ժխտող աշխարհայացքի մի տեսակ, որը կոչվում է ցինիզմ: Այն, իբրև աշխարհայացքի տեսակ, սկզբունքորեն ժխտում է կյանքն իմաստավորող և մեկնաբանող որևէ պատմության կամ տեքստի իսկությունն ու արժեքավորությունը: Պատահական չէ, որ «մարդու համար կյանքը վերածվում է իրական աղետի ոչ թե այն ժամանակ, երբ տնականորեն ինչ-որ բանի պակաս է զգում, այլ այն ժամանակ, երբ կորցնում է կյանքի նկատմամբ հետաքրքրությունը»[2]:

Սակայն, եթե ցինիզմի անհատական դրսևորումները քիչ թե շատ ուսումնասիրված են հումանիտար և հասարակագիտական տարբեր

---

[1] **Է. Հարությունյան**, Համատեքստի հերթափոխը. մարդկային կեցության սոցիոմշակութային այլատեսակությունների ապականումը, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2016, № 1 (19), էջ 7:

[2] **Է. Հարությունյան**, Համատեքստի հերթափոխը. վիճարկումը իբրև անհնարինի հաղթահարման կամազդակում, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2016, № 2 (20), էջ 5:

գիտակարգերի կողմից, ապա ցինիզմի հասարակական դրսևորումները պատշաճ ուշադրության չեն արժանացել: Մինչդեռ արդի աշխարհում, այդ թվում նաև հայկական սոցիումում տեղի ունեցող սոցիոմշակութային և հատկապես քաղաքական գործընթացները ցուցանում են զանգվածային ցինիզմի սոցիալ-փիլիսոփայական վերլուծության անհրաժեշտությունն ու արդիականությունը: Եթե անհատական մակարդակում ցինիզմը մերժում է կյանքն իմաստավորող և մեկնաբանող պատումները, ապա զանգվածային մակարդակում մերժում է սոցիոմշակութային կյանքն իմաստավորող, մեկնաբանող և ուղղորդող պատմություն-տեքստերը՝ գաղափարախոսությունները, ուտոպիաները, քաղաքական կամ սոցիոմշակութային նախագծերը և այլն:

Զանգվածային ցինիզմը պայմանականորեն կարելի է սահմանել որպես հասարակության սոցիոմշակութային վիճակ, որի դեպքում նրանք, ովքեր հասկանում են իրերի «իրական, անթաքույց, մերկ դրվածքն» ու հարմարվել են դրա հետ, չեն կարողանում և երբեմն էլ անգամ չեն փորձում այդ դրվածքի բովանդակությունը թաքցնել մնացածից: Երբ մեծամասնությունը հասկանում է դրվածքը, սակայն փոփոխություններ նախաձեռնելու զորություն չունի, ապա համակվում է ընդհանրապես որևէ փոփոխություն անելու իմաստն ու նշանակությունը ժխտելու մոլուցքով, այսինքն՝ ցինիզմով: Ցինիզմը ժխտում է փոփոխության ինչպես հնարավորությունը, այնպես էլ անհրաժեշտությունը, ինչն իրական խնդիր է ոչ միայն հասարակության իշխող վերնախավի, այլև հասարակության համար: Սովորաբար նման պայմաններում մարդիկ ընդվզում կամ անտարբերության են մատնվում: Զանգվածային ցինիզմի պայմաններում երբեմն մարդն ընդվզում է իրականությունից փախուստի տեսքով (հարբեցողություն, թմրամոլություն և այլևայլ մոլություններ), երբեմն՝ բռնության, երբեմն էլ՝ արտագաղթի տեսքով (ինչպես օրինակ՝ հայոց հասարակության դեպքում): Հայոց սոցիումի պարագայում, օրինակ, արտագաղթի դիմող մեր քաղաքացիները հաճախ ղեկավարվում են գործելու և իրենց վերաբերմունքն արտահայտելու «փոքր Միերի» տրամաբանությամբ՝ նախընտրելով փակվել արտաքին կամ ներքին որևէ քարանձավում. մինչև «աշխարք ավերվի, մեկ էլ շինվի»:

Դարեր շարունակ պատրանքները, առասպելները, միֆոլոգեմները, այսինքն՝ սոցիոմշակութային կյանքի կազմակերպման կենսիմաստային տեքստերը սնել և ուղղորդել են այս կամ այն հասարակության պատմական ընթացքը: Աշխարհը սևի և սպիտակի, չարի և բարու, լավի և վատի բաժանելը մարդու հիմնային հատկություններից է, որը նրա մեջ ներդրված է «արքետիպային», ենթագիտակցական, մի խոսքով՝ խորքային մակարդակում: Աշխարհի երկատման այս հատկությունն ըստ էության իմաստ և առաքելություն է հաղորդում ինչպես առանձին մարդու կենսագործունեությանը, այնպես էլ մարդկային պատմությանն ընդհանրապես: Մարդկային գործունեության բազմա-

թիվ ոլորտներ, ինչպիսիք են բարոյականությունը, մշակույթը, արժեքները, իրենց գոյությամբ պարտական են հենց այս հիմնային հատկությանը: Աշխարհի երկատման այս հատկությունից են սնվում նաև կրոնները, ուտոպիաները, գաղափարախոսությունները և այլն, որոնք ոչ միայն մեկնաբանում, այլև առաջարկում են կյանքի կազմակերպման որոշակի մոդելներ: Եթե մինչարդիականության շրջանում չարի և բարու տարանջատման դեր էին կատարում ուտոպիաներն ու կրոնները, ապա արդիականության շրջանից սկսած՝ այդ դերը հիմնականում իրենց վրա են վերցրել գաղափարախոսությունները: Միջնադարյան հասարակությունները, ինչպես հայտնի է, ծիսականացված հասարակարգեր էին, որտեղ մոգականությունը և գերբնականությունը միախառնված էին իրականության հետ, բայց «մոգական ռեալիզմի» այդ դարաշրջանն ավարտվեց Վերածննդով, ռեֆորմացիայով և լուսավորականության շարժումով, որոնք սկիզբ դրեցին արդիականացման նախագծին: Վերջինս կազմաքանդեց աշխարհի միջնադարյան-աստվածաբանական պատկերը՝ կենսիմաստային կրոնական տեքստերը փոխարինելով աշխարհիկ տեքստերով՝ գաղափարախոսություններով: Պատահական չէ, որ արդիականության դարաշրջանի հայտնի տեսաբան, ամերիկացի սոցիոլոգ Չ. Լեմերտը պնդում է, որ, իբրև կյանքի կազմակերպման տեքստ-նախագիծ, գաղափարախոսությունը արդիականության դարաշրջանի ծնունդ է և հասարակության սոցիոմշակութային կյանքը կազմակերպող աշխարհիկ բովանդակությամբ օժտված ճշմարտության նոր կրողն է[3]:

Արդիականության դարաշրջանն ըստ էության դարձավ քրիստոնեական-կրոնական մետապատում-տեքստերի գերեզմանափորը՝ ձևավորելով կենսիմաստային նոր մետապատում-տեքստեր՝ գաղափարախոսություններ: Ժամանակակից քաղաքակրթությունում ինչպես մարդու կենսագործունեությունը, այնպես էլ հասարակության զարգացման ընթացքն ու մարդկության պատմության առանցքն իմաստավորող ու մեկնաբանող տեքստերը թելադրված են գերազանցապես լուսավորականության շարժման գաղափարական ոգուն համապատասխան տրամադրություններով և տրամաբանությամբ, որոնք, ժամանակակից սոցիոմշակութային կյանքի կազմակերպման ներքին օրինաչափություններից ելնելով, այլևս մարդկանց կողմից չեն ընկալվում որպես ճշմարտություն և իմաստ կրող տեքստեր, որպես իրենց կյանքը մեկնաբանելու և հասկանալի դարձնելու արժանի պատմություններ: Բանն այն է, որ արդի քաղաքակրթությունը, ի թիվս այլ կառուցողական գործոնների, առանձնանում է նաև երկու ապակառուցողական գործոններով՝ սպառողական մշակույթով և ծայրահեղ անհատապաշտությամբ: Տեխնոլոգիական հագեցվածության շնորհիվ տնտեսության աննախադեպ աճը ժամանակակից քաղաքակրթությունում ասես

[3] Տե՛ս **Lemert C.**, Sociology after the crisis, London-New York, 2016, էջ 59-65:

կյանքի է կոչում «բարեկեցության հասարակության» մասին մարդկության վաղեմի իդեալը, որն արտահայտվում է սպառողական հասարակության տեսքով, իսկ ավանդականության հարացույցի ճգնաժամը, որը սկզբնավորվել էր դեռևս լուսավորականության շարժումով, հանգեցնում է սոցիոմշակութային հարաբերություններում ծայրահեղ անհատապաշտության ձևավորմանը, որի պատճառով սկսվել է «կեցության և ինքնաճանաչողության վերաիմաստավորման ու վերագնահատման մի համընդհանուր գործընթաց, ինչի հետևանքով առաջնային են դառնում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են օգտապաշտությունը, միջանձնային հարաբերությունների մակերեսայնությունը, մասնավոր կյանքի նկատմամբ ընդգծված հետաքրքրությունը, սոցիալականի նկատմամբ անտարբերությունը»[4]: Սպառողականության և անհատապաշտության պայմաններում, ինչն ուղեկցվում է նաև գաղափարախոսությունների հումանիստական բովանդակության հանդեպ հավատի բացակայությամբ, համահասարակական նշանակություն ունեցող կենսիմաստային տեքստերը բնականաբար ճգնաժամ են ապրում:

Գաղափարախոսությունների ճգնաժամի կամ ավարտի մասին տեսաբանները սկսեցին խոսել դեռևս 20-րդ դարի կեսերին[5]: Նրանք գաղափարախոսությունների քննադատության թիրախ ընտրեցին մասնավորապես ինչպես մարքսիստական, սոցիալիստական և ձախական, այնպես էլ ազատական, պահպանողական և աջական գաղափարախոսությունները: Սակայն այդ վերլուծություններում քննվում է ոչ այնքան գաղափարախոսությունը, որքան նրա հանդեպ հասարակության հիասթափությունն ու անհաղորդությունը, ինչը պայմանավորված է գաղափարախոսությունների մարմնավորման հակահումանիստական էությամբ: Այլ կերպ ասած՝ ժամանակակից աշխարհում գաղափարախոսությունները վերաճել են իրենց իսկ հռչակած իդեալների մարմնավորումը խոչընդոտող երևույթի: Անշուշտ գրեթե բոլոր գաղափարախոսությունների հիմքում ընկած են լուսավորական իդեալներ և արժեքներ: Ոչ մի գաղափարախոսություն, անգամ նացիոնալ-սոցիալիզմը, չի դնում մարդկությանը տառապանքներ և ավերածություններ պատճառելու խնդիր, սակայն գործնականում դրանց մարմնավորման արդյունքները հիմնականում կրում են ապակառուցողական բնույթ: Պատմությունը ցույց է տալիս, որ գաղափարախոսությունների նյութականացման և ոչ մի փորձ այդպես էլ չկարողացավ խուսափել մարդկային ճակատագրերի խեղումներից, դժբախտություններից ու ողբերգություններից, թեև նրանց հարուցած շարժումները սկսվել են մարդասիրական շարժառիթներով:

---

[4] **Գ. Սողոմոնյան**, Մշակութամարդաբանական փոխակերպումների սոցիալական դինամիկան, «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2016, № 2 (20), էջ 3:

[5] Տե՛ս **Jacoby R.**, The end of utopia, Politics and culture in an age of apathia, New York, 1999, էջ 2-6:

Երբ մարդը կամ հասարակությունն ընդհանրապես այնքան միամիտ չէ խաբկանքներին կամ պատրաքներին հավատալու համար, իսկ այդ խաբկանքների ու պատրանքների հնարավոր արարիչների միտքը բթացել կամ հոգնել է, ապա մարդու ներաշխարհը կամ հասարակական համակարգն ընդհանրապես բռնկվում է ցինիզմի վարակով: Աշխարհի ապամոգականացման ծրագիրը, որի սկիզբը դրվել է Վերածննդի, ռեֆորմացիայի, լուսավորականության դարաշրջաններից, այսօր հետարդիության, սպառողականության և անհատապաշտության մշակույթի ձևավորման շնորհիվ կանգնել է աշխարհապատկերման մի եղանակի առջև, որը, կազմաքանդելով աշխարհը մեկնաբանող, «գունավորող» ամեն մի մոգականություն, «գունազրկել» է այն, դարձրել անհետաքրքիր: Աշխարհի ապամոգականացումը, պատրանքազերծումը փաստորեն նախ ձևավորեցին նոր գաղափարախոսություն-տեքստեր, որոնք նորեն հասկանալի և իմաստալից դարձրին մարդու՝ հասարակական բարեկեցությանը միտված կենսագործունեությունը, այնուհետև նորեն «մերկացրին» իր գաղափարախոսություն-տեքստերով կառուցարկված իրականությունը, ինչով էլ անհետաքրքիր դարձրին այն: Ուստի արդիականության գաղափարներով սնվող աշխարհի պատրանքազերծման այս գործընթացը մարդուն զրկեց նաև հասարակությունը «ցեմենտող» գաղափարախոսություն-տեքստերից: Իսկ «վարքի միասնական շահամիտում և արժեքների ընդհանուր համակարգ չունեցող հետարդիական հասարակության համար կենսիմաստային ճգնաժամը դառնում է անտարբերության, այսինքն՝ մարդու էութենական ուժերի լիակատար կապիտուլյացիայի լուրջ պատճառ»[6]:

Սակայն, հետաքրքիր մի զուգադիպությամբ, ինչպես ժամանակակից հասարակություններում, այնպես էլ արդիականացման ուղին բռնած հայաստանյան սոցիումում տարածվում են արդիականության դարաշրջանի իդեալների և արժեքների նկատմամբ ցինիկ-մերժողական տրամադրությունները: Այդուհանդերձ, զանգվածային ցինիզմի դրսևորումները արդիականության կամ արդեն իսկ հետարդիականության մշակույթի կրող հասարակություններում և հայաստանյան սոցիումում նույնական չեն: Այսինքն՝ եթե ախտանիշերը նույնը կամ գոնե նման են, ապա պատճառները տարբեր են: Բանն այն է, որ հետարդիականության մշակույթը կրող հասարակություններում գաղափարախոսական տեքստերը այս կամ այն կերպ արդեն մարմնավորվել և սպառվել են, մինչդեռ հայաստանյան սոցիումում արդիականության դարաշրջանի կենսիմաստային տեքստերը ոչ միայն կյանքի չկոչվեցին, այլև մարմնավորման փորձերն իսկ ի սկզբանե դատապարտված են ձախողման, քանի որ հայաստանյան սոցիումը իր զարգացման ներկա փուլում արդիականության դարաշրջանի գաղափարախոսություն-տեքստերի մարմնավորման համար իրական հակահամակարգ է:

---

[6] **Գ. Սողոմոնյան**, նշվ. աշխ., էջ 15:

Հայաստանյան սոցիոմշակութային միջավայրի արդիականացման փորձերը սկսվել են դեռևս 19-րդ դարից, երբ ժամանակի հայ լուսավորիչները փորձում էին արդիականացնել արևելահայոց և արևմտահայոց սոցիոմշակութային միջավայրը: Արդիականացման այդ փորձերը երբեմն ողբերգական բնույթ էին կրում, երբեմն էլ ուղղակի անօգուտ էին: Հասարակության արդիականացման նման փորձեր են իրականացվում նաև այժմ: Սակայն պարզ դիտարկումն իսկ վկայում է, որ հայոց սոցիումի արդիականացումը դեռևս չունի հայոց սոցիոմշակութային ինքնությանը համահունչ գաղափարախոսական բազա:

Բանն այն է, որ «կյանքի կազմակերպման ու կանոնակարգման յուրաքանչյուր մշակույթ ունի գերակա մի կոդ, որը կանխորոշում է տվյալ համակեցության շրջանակներում ընկալման ու ըմբռնման բնույթը, այն էմպիրիկ կարգը, որի մեջ մարդիկ պետք է կողմնորոշվեն»[7]: Այսինքն՝ սոցիոմշակութային կյանքի կազմակերպմանն ուղղված գաղափարախոսություն-տեքստը տվյալ սոցիալական համակարգում մարմնավորման հնարավորություն ունի այնքանով, որքանով որ այն համապատասխանում է տվյալ սոցիումի ընկալման և ըմբռնման բնույթին կամ «էմպիրիկ կարգին»: Այլ կերպ ասած՝ հայոց սոցիումը ունակ է լինելու ժողովրդավարական կամ ազատական, սակայն սոցիոմշակութային հարաբերությունների կառուցարկման դարերի փորձությունը կրած համակարգը զրկված է այդ հնարավորությունից: Թերևս ունակության և հնարավորության այս հակասության անտեսումն ընկած է հանրային դիսկուրսի տարբեր բևեռներում գտնվող վերլուծաբանների, հրապարակախոսների, իրավապաշտպանների, քաղաքական և պետական գործիչների «գաղափարական» հակասությունների հիմքում: Առավել հաճախ հենց ազատական ծայրահեղականությամբ տոգորված անհատներն են, որ չեն նկատում այս հակասությունը: Ընտրությունից ընտրություն կամ հրապարակային այլ իրադարձությունների հաջորդափոխությանը հետևող հանրային դիսկուրսում քաղաքական դրվածքի լուռ կողմնակիցների և այդ դրվածքին ըմբռնող հատվածի հակասությունը դրսևորվում է համակարգի այլ կերպ լինելու (ժողովրդավարական, իրավական, արդար և այլն) ունակության և հնարավորության տարբմբռնման տեսքով: Քաղաքական դրվածքի կողմնակիցները կամ հարմարվածները խոսում են համակարգի այլ կերպ լինելու հնարավորության բացակայության, իսկ հակառակորդները՝ ունակության առկայության մասին:

Հասարակությունը ոչ միայն առանձին մարդկանց համագումար է, այլև առանձին մարմին է, որն ունի զարգացման և գործառության ներհամակարգային օրինաչափություններ, և այդքանով այն սոցիոմշակութային հարաբերությունների որոշակի համակարգի կրող է: Լինե-

[7] **Է. Հարությունյան**, Համատեքստի հերթափոխը. վիճարկումը իբրև անհնարինի հաղթահարման կամազդակում, էջ 12:

լով սոցիոմշակութային հարաբերությունների համակարգ՝ հասարակությունը ենթակա է կազմակերպման: Սակայն գաղափարախոսության գործառույթը ոչ այնքան հասարակական կարգի կազմակերպումն է, որքան «իրականության քողարկումը»[8]: Գաղափարախոսություն-տեքստը ինչ-որ իմաստով քողարկում է հասարակության կենսագործունեության էմպիրիկ կարգը՝ առաջարկելով սոցիալական իրականության այլընտրանքային տարբերակներ: Սակայն երբ գաղափարախոսություն-տեքստն այլևս չի կատարում իրականության «քողարկման» գործառույթը, այն արժեզրկվում է որպես գաղափարախոսություն և այլևս ի զորու չէ իմաստավորելու սոցիալական իրականությունը, ինչն արտահայտվում է հասարակության շրջանում այդ գաղափարախոսությունից հիասթափությամբ, դժգոհությամբ և այլ հոռետեսական տրամադրություններով: Երբ գաղափարախոսությունը բախվում է իրականությանը, և մարդիկ աստիճանաբար տեսնում են, որ իրենց կյանքը և գերակա գաղափարախոսության կողմից հռչակված իդեալներն ու գաղափարները չեն համընկնում, ապա աստիճանաբար նկատում են գաղափարախոսության արդեն ոչ թե իրականությունը մեկնաբանող, այլ իրականությունը քողարկող, միգուցե նաև աղճատող հատկությունը: Երբ հայտարարված գաղափարախոսությունը մերկացվում է որպես սին գաղափարներից և անհողեղեն իդեալներից բաղկացած մի համակարգ, ապա մարդիկ սկսում են տենչալ ոչ թե ճշմարտություն, այլ արդեն ճշմարտության մերկացում: Մերժվում են ոչ միայն տվյալ գաղափարախոսության իդեալներն ու արժեքները, այլև ընդհանրապես ցանկացած իդեալ կամ արժեք մի որոշ ժամանակ կորցնում է իր լինելիության իրավունքը: Այդ է պատճառը, որ գաղափարախոսությունների ճգնաժամային փուլում հասարակության ներսում գլուխ է բարձրացնում ցինիկի կենսադիրքորոշումը: Մարդիկ իրականության նկատմամբ դիրքավորվում են ժխտման, մերժման նախատրամադրվածությամբ, այլ կերպ՝ մի ծայրահեղությունից (իրականության գաղափարախոսական շղարշավորումից) ընկնում են մեկ այլ ծայրահեղության գիրկը (մերժվում են իրականության քողարկավորման բոլոր փորձերը, ուստի նաև ցանկացած բարոյական կամ մշակութային արժեք կամ նորմ):

Ավանդապաշտության, կրոնական բարոյականի միջնադարյան հասարակարգին բնորոշ աշխարհապատկերման փուլը դեռևս չհաղթահարած հայոց սոցիումը արդիականության դարաշրջանի գաղափարախոսություն-տեքստերի՝ սոցիոմշակութային իրականությունում մարմնավորման համար ոչ այնքան բարենպաստ միջավայր է: Բանն այն է, որ հայոց սոցիումում կենսագործունեության էմպիրիկ կարգը հենվում է ավանդական-ագրարային սոցիոմշակութային կարգ ունե-

[8] **Уэст Д.** Славой Жижек – беспокойный субъект идеологии (Радикальные отступления) // "Континентальная философия. Введение". М., 2015, с. 390.

ցող հասարակությունների արժեքների և սկզբունքների վրա՝ հեղինակապաշտություն, բարոյականության իռացիոնալ ըմբռնում, ընտանիքապաշտություն, որտեղ դեռ գերակա են կրոնական կենսիմաստային ուղղորդիչները: Արդիականության դարաշրջանի գաղափարախոսություն-տեքստերը, թելադրված լինելով լուսավորականության դարաշրջանի իդեալներով՝ բանապաշտություն, անհատակենտրոնություն, աշխարհիկացում և այլն, բախվելով հայոց սոցիումի աշխարհըմբռնման էմպիրիկ կարգին, մնում են պատրանքի և խաբկանքի կարգավիճակում: Այդ է պատճառը, որ հայոց երեք պետականության շրջանում ի սկզբանե հայտարարված գաղափարախոսությունները, ձուլվելով հայաստանյան սոցիոմշակութային իրականության էմպիրիկ կարգի հետ, դարձան «հայկական». առաջին հանրապետության ազգայնական սոցիալիզմը՝ հայկական սոցիալիզմ, երկրորդ հանրապետության կոմունիզմ-բոլշևիզմը՝ հայկական կոմունիզմ, երրորդ հանրապետության ազատական ժողովրդավարությունը՝ հայկական ազատական ժողովրդավարություն: «Հայաֆիկացվելով» արդիականության դարաշրջանի գաղափարախոսությունները սպառվեցին՝ իրենց հետևից թողնելով զանգվածային հիասթափության և հուսահատության հերթական ալիքը, որը բարենպաստ միջավայր է զանգվածային ցինիզմի ձևավորման և տարածման համար:

Խնդիրն այն է, որ զանգվածային ցինիզմը ի հայտ է գալիս սոցիալական ինստիտուտների, հեղինակությունների նկատմամբ ի սկզբանե չափազանցված սպասումներից, որը հետագայում հանգեցնում է այդ ինստիտուտներից հիասթափության, ինչն էլ ուղեկցվում է խաբվածության և դավաճանվածության զանգվածային տրամադրություններով[9]: Այսինքն՝ ցինիզմի զանգվածային դրսևորումներն առաջին հերթին պայմանավորված են ի սկզբանե հասարակական գիտակցության մեջ գերակա գաղափարախոսության նկատմամբ լավատեսական և երբեմն իրականության հետ որևէ աղերս չունեցող սպասելիքների տարածմամբ, ինչը հետագայում հանգեցնում է այդ գաղափարախոսությունից հիասթափության: Գաղափարախոսությունը, սոցիալական իրականության կառուցարկման եղանակ լինելով, հիմքում անհրաժեշտաբար կրում է առասպելական պատմություններ: Բոլոր գաղափարախոսությունները կառուցված են զանգվածների առասպելական աշխարհապատկերման տեքստերով և հիմքում ունեն առասպելական այնպիսի պատումներ, ինչպիսին է չարի և բարու հավերժական պայքարը, որն անվերապահորեն ավարտվում է բարու հաղթանակով, կամ՝ երջանկության հասարակության կառուցարկման առասպելը, կամ՝ փրկչի գաղափարը և այլ պատումներ: Անգամ ազատական ժողովրդավարությունը, որի հիմքում ընկած են բանապաշտությունն ու

[9] Տե՛ս **Kanter D. L., Philip H. M.**, The Cynical Americans - Living and Working in an Age of Discontent and Disillusion, San Francisco, 1989, էջ 30:

սոցիոմշակութային իրականության աշխարհիկացումը, նույնպես զերծ չէ իրականության աղճատման այս եղանակից, ինչը թերևս նաև բնական է, քանի որ զանգվածային գիտակցությունը, լինելով իռացիոնալ, հնարավոր չէ ուղղորդել առանց իռացիոնալ պատմությունների: Զանգվածները պարզապես ի սկզբանե չեն ընդունի այն գաղափարախոսությունը, որը կփորձի պատկերել իրականությունն առանց լավատեսական սպասումների, առանց իրականության առասպելականացման, ինչը խոսում է այն մասին, որ ցանկացած գաղափարախոսության պատվաստման փորձ ի սկզբանե դատապարտված է այդ գաղափարախոսությունից հիասթափության և հուսահատության: Այստեղ բախվում ենք պարադոքսալ իրավիճակի. կա՛մ գաղափարախոսությունը չի առասպելականացնում իրականությունը (ինչն անհնար է պատկերացնել) և այդպես էլ չի ընդունվում հասարակության կողմից ու տապալվում է, կա՛մ էլ ժամանակավոր հետաձգում է այդ տապալումը՝ առասպելականացնելով սոցիոմշակութային իրականությունը, գեներացնելով լավատեսական տրամադրություններ, և ի վերջո բախվելով իրականության հավերժական անկատարության հետ՝ ցինիզմի զանգվածային դրսևորումների պատճառ է դառնում:

Եվ այսպես՝ զանգվածային ցինիզմի պայմաններում ցանկացած գաղափարախոսություն-տեքստի մարմնավորումը դատապարտված է հայտնվելու անկատարության արատավոր շրջանում: Ցինիկ հասարակական միջավայրում ժողովրդավարության գաղափարախոսության իդեալները, որոնք համահունչ են արդիականության դարաշրջանի գաղափարական ոգուն, նույնպես դատապարտված են հայտնվելու այդ շրջանում: Ժողովրդավարական ինստիտուտների կայացումը անհնար է առանց մարդկանց հավատի: Որքան անհնար է թվում ժողովրդավարական ինստիտուտների կայացումը, այնքան ավելի են խորանում ցինիկ տրամադրությունները, որքան ավելի է տարածվում զանգվածային ցինիզմը, այնքան ավելի է հեռանում հիշյալ ինստիտուտների կայացման հեռանկարը:

Այս համատեքստում ցինիզմն իրական մարտահրավեր է մասնավորապես ժողովրդավարական ինստիտուտներից մեկի՝ քաղաքացիական հասարակության կայացման համար: Քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնասյունը քաղաքացիական և իրավական գիտակցությամբ օժտված քաղաքացին է, որի կառուցողական ակտիվությունը նպաստում է իրավահավասար քաղաքացիներից բաղկացած քաղաքացիական հասարակության կառուցարկմանը: Քաղաքացիական գիտակցության հիմքում ընկած է հավատը առ արդարությունը, մարդկանց իրավահավասարությունը, սոցիոմշակութային հարաբերությունների կարգավորման գործում ոչ լեգիտիմ բռնության բացառումը և այլն: Այսինքն՝ անհատից քաղաքացի «կերտելու» համար հարկավոր է՝ հասարակության շարքային անդամը հավատա, որ պետա-

կան ինստիտուտները, անկախ իր սեռից, ծագումից, ազգային կամ ընտանեկան պատկանելությունից, գործելու են պատշաճորեն: Եթե բացակայում է պետական ինստիտուտների անկողմնակալության և օբյեկտիվության նկատմամբ հավատը, ապա քաղաքացիական գիտակցության ձևավորման մասին խոսելն իսկ եթե ոչ երեսպաշտության, ապա միամտության դրսևորման ցցուն օրինակ է: Իսկ ցինիկի գիտակցությամբ օժտված անհատը սկզբունքորեն չի կարող դրսևորել քաղաքացիական ակտիվություն, քանի որ նա դժբախտություն ունի տեսնելու «իրականության մերկությունը»:

Զանգվածային ցինիզմի պայմաններում, որքան էլ տարօրինակ թվա, ծաղկում են կրոնական ու աղանդավորական կազմակերպությունները: Բանն այն է, որ «որքան էլ «բանական մարդու» էության այլափոխման համար ներկայումս շրջանառում են «սպառող», «զվարճացող», «խաղացող» և հեդոնիստական այլ պիտակավորում-բնութագրումները, միևնույնն է, մարդու էութենական բնութագիծը իր գոյության իմաստի որոնումն է, որոշակի, հատկապես իրեն բավարարող իմաստի փնտրտուքը»[10]: Որքան էլ որ մարդը կորցնում է հավատը իր ապագայի, բարեկեցության հասնելու և ապահովության նկատմամբ, նա կարիք ունի մեկնաբանելու իր գոյությունն ու իմաստ հաղորդելու վերջինիս: Եթե լուսավորյալ աշխարհիկ պատումները, որոնց վերարտադրության կենտրոնները կրթօջախներն են, չեն բավարարում իրենց կենսագործունեությունը մեկնաբանելու և իմաստավորելու համար, ապա մարդիկ այդ իմաստներն ու մեկնաբանությունները փնտրում են այլ տեղերում՝ իրականությունից փախուստի զանազան եղանակների միջոցով: Հուսահատության և հիասթափության մեջ գտնվող մարդը հնարավոր «որս» է աղանդավորական կամ կրոնական հոգեորսների համար, որոնք մոլորության մեջ գտնվող մարդու դատարկված ներաշխարհում սերմանում են առեղծվածային զանազան պատմություններ: Առեղծվածն ու խորհրդավորությունը բարենպաստ հող են գտնում «մոլորյալների» ներաշխարհում: Դա բնական է, քանի որ կրթօջախը, որ լուսավորական-պետական ինստիտուտների վերարտադրության հիմնական օղակն է, չունենալով համապատասխան հեղինակություն հանրության աչքում, արհամարհվում է որպես ինստիտուտ: Այս հանգամանքով է բացատրվում նաև հայաստանյան սոցիումում օրեցօր ավելացող եկեղեցիների քանակը: Եթե չկա փրկություն այս աշխարհում, մարդիկ փրկություն են փնտրում այլ՝ այնկողմնային աշխարհներում: Եթե իմաստալից ապրելու երաշխիքներ չի տալիս այսկողմնային իրականությունը, ապա մնում է հույսը դնել այնկողմնայինի վրա:

---

[10] **Վ. Միրզոյան**, Վաղանցիկության զգացումից դեպի հավիտենականության իմաստավորում, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2017, № 2 (23), էջ 5:

Սոցիոմշակութային իրականությունը կառուցարկող գաղափարախոսություն-տեքստերի արժեզրկման համատեքստում ցանկացած գաղափար, որը մատուցվում է որպես արժեք, իրականում ոչ այլ ինչ է, եթե ոչ հասարակությանը մանիպուլացնելու միջոցով ենթակայության տակ պահելու և կառավարելի դարձնելու միջոց: Այսօր էլ և՛ ողջ աշխարհում, և՛ հայաստանյան սոցիումում իշխանություն ունեցող կենտրոնները տեղեկատվական կայքերի, սոցիալական ցանցերի և այլ ԶԼՄ-ների միջոցով հանրությանն են մատուցում պաթոսային տրամադրություններով համեմված այլևայլ գաղափարախոսություններ՝ ազգայնականություն, ազատականություն, ժողովրդավարություն և այլն: Սակայն եթե կարելի է մարդկանց գիտակցությունը տևական ժամանակ ուղղորդել և վերահսկողության տակ պահել, ապա ի վերջո մարդուն հնարավոր չէ արգելել մտածել: Դարեր շարունակ իշխանության աշխարհիկ և հոգևոր կենտրոնները զանգվածային գիտակցության մանիպուլացման և պարզապես բռնության միջոցով փորձեր են կատարել այդ ուղղությամբ, սակայն այդպես էլ վերջնականապես չեն կարողացել հասնել իրենց փափագած երազանքին՝ մարդկանց բացարձակ և անվերապահ ենթակայությանը: Ճիշտ է՝ շատ հաճախ տարբեր մարդիկ բանականության դիրքերը պաշտպանելու համար վճարել են իրենց կյանքով, սակայն դանդաղ քայլերով բանականության հաղթարշավը հանգեցրել է ժամանակակից գիտահենք հասարակության կառուցարկմանը: Զանգվածային ցինիզմի ժամանակակից դրսևորումները խոսում են այն մասին, որ մարդիկ, այնուամենայնիվ, դեռ մտածել գիտեն և ներքին մի հոտառությամբ զգում են, որ ցանկացած գաղափարախոսության մարմնավորման հետևանքը առաջին հերթին դժբախտություն է բերում հենց «փոքր մարդուն»: Այդ է պատճառը, որ հանրային դիսկուրսում անկեղծության և շիտակության բացակայությունը լրացվում է «ճշմարտախոսության» ծայրահեղ դրսևորումներով՝ հեգնանքով, ծաղրանքով և ցինիզմով, որոնց նպատակն արդեն ոչ թե ճշմարտությունը բացահայտելը կամ ճանաչելն է, այլ «մերկացված ճշմարտության» ցուցանումն է: Ուստի, քանի դեռ մարդը չի կորցրել մտածելու, քննադատելու կարողությունը, նա կարող է և երբեմն էլ պետք է լինի ցինիկ, սակայն խնդիրն այն է, որ այդ ցինիզմն ի վերջո չհանգեցնի կյանքի նկատմամբ հետաքրքրության կորստի: Գերմանացի ժամանակակից փիլիսոփա Պ. Սլոտերդայկը նշված խնդրի լուծումը տեսնում է ոչ թե հերթական անգամ նոր գաղափարախոսություն-տեքստերի միջոցով մարդկանց պատրանքներով սնելու, այլ ցինիզմը առողջ նեոկինիզմով փոխարինելու մեջ[11]: Նեոկինիզմը, ինչպես և ցինիզմը, նույնպես կասկածանքով է վերաբերվում ցանկացած գաղափարախոսություն-տեքստի ճշմարտության կրողի տիտղոսի հավակնութ-

[11] Տե՛ս **Слотердайк П.** Критика цинического разума. М., 2009, էջ 767-790:

յանը, սակայն, ի տարբերություն ցինիզմի, այն դեռ չի սպառել ապրելու և արարելու նկատմամբ հետաքրքրությունը: Պատահական չէ, որ ժամանակակից աշխարհում արդեն իսկ ի հայտ են գալիս անտիկ հունական կինիզմի փիլիսոփայությամբ ոգեշնչված նեոկինիկական փիլիսոփայական հոսանքներ: Սակայն այն հարցին, թե արդյոք նեոկինիկական փիլիսոփայական հոսանքները կհաղթահարեն արդի հասարակություններին բնորոշ կենսիմաստային ճգնաժամը, կպատասխանի միայն ժամանակը:

Բանալի բառեր – *ցինիզմ, զանգվածային ցինիզմ, արդիականության նախագիծ, գաղափարախոսությունների ճգնաժամ, հետարդիականություն, նեոկինիզմ, սոցիոմշակութային հակահամակարգ*

ЛЕВОН БАБАДЖАНЯН – *Диффузный цинизм как социокультурная антисистема.* – В основе социокультурного конструирования современного мира лежат идеологии модерна, которые претерпевают сегодня кризис. Как и во всём мире, в армянском социуме распространяется скептическое и циничное отношение к ним. Но социокультурные предпосылки этого в армянском и модернизированных обществах различаются. Если в модернизированных обществах цинизм обусловлен форймированием культуры постмодерна, потребительства и индивидуализации отношений, то в армянском обществе – несопоставимостью социкультурных ценностей и норм среды и идеологии модернити. Но в обоих случаях циничные общества – это социокультурные антиситемы для любых идеологий.

Ключевые слова: *диффузный цинизм, проект модерна, кризис идеологии, постмодернизм, неокинизм, социокультурная антисистема*

LEVON BABAJANYAN – *The Diffusive Cynicism as a Sociocultural Antisystem.* – The sociocultural construction of the modern world is based on the ideologies of the project of modernity, which are undergoing a crisis today. As in the whole world, so in the Armenian society, skeptical and cynical attitudes are being spread in relation to these ideologies. But in the Armenian society and in modernized societies the socio-cultural preconditions for the diffusion of cynicism in relation to ideologies are different. While in modernized societies the spread of cynicism is conditioned by the sociocultural preconditions of the consumer society, the formation of a postmodern culture and individualization, in Armenian society this is conditioned of the incompatibility of the sociocultural values and norms of the Armenian sociocultural environment and the ideologies of modernity. But in both cases, cynical societies are sociocultural antisystems for any ideologies.

Key words: *cynicism, diffusive cynicism, project of modernity, crisis of ideologies, postmodernity, neocynicism, sociocultural antisystem*